ԶԵԿ
ԼՈՆԴՈՆ

ԳԱՅԼԸ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1937

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

82.1-93

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԳԱՅԼԸ

Նկարները
Լ. ԿԱՊԼԱՆԻ

Ռուսերենից թարգմանեց
Հ. ՀԱՃՐԱՊԵՏՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1937

ՓՈՔՐ ՑԵՎ ՄԻՋԻՆ ՀԱՍԱԿԻ ՑԵՐԵԽԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

— Գայլ։ Գայլ*)։ Աբի այստեղ, Գայլ, կանչում եր Մեջը։

Իրվինը յերկու մատը դրեց բերանին և զիլ սուլոցով շվացրեց։

Խիտ բուսականություն ունեցող բլրից նրանք ճյուղերի շխկոց լսեցին և ուղղաձիգ պատից քառասուն վոտ բարձրության վրա յերևացին Գայլի գլուխը և առջևի թաթերը։ Գայլը թաթերով մի փոքրիկ քար հրեց և ականջները սրած, հետևեց, մինչև վոր քարն ընկավ Մեջի վոտերի մոտ։ Հետո նայեց իր տերերին և բերանը բանալով, ժպտաց վերևից։

— Այ դու, Գայլ, Գայլ, մեր հիանալի Գայլ,— ակամա գոչեցին յերկուսն եր։

Այս խոսքերը լսելիս շան ականջները

*) Շան անունն է։

դիպան գլխին, իսկ գլուխը, կարծես մի անտեսանելի ձեռքի փայփայանքից, խոնարհաբար թեքվեց։

Նրանք տեսան, թե ինչպես Գայլն անհայտացավ թփերի մեջ, անցնելով այն արահետով, որով իրենք եկին գնում։ Մի քանի րոպեյից հետո, շունը վերադարձավ արահետը դուրս թռավ։ Նրա յետևից մանրիկ քարերի և հողի հեղեղ թափվեց։ Տղամարդը շոյեց շան ուսը և քորեց ականջները, իսկ կինը փայփայեց մի քիչ ավելի և Գայլը վազեց նրանց առջևից—արահետով, հազիվ գետնին դիպչելով, առանց վորևե ջանքի, ինչպես իսկական գայլ։

Թե մարմնի կազմությամբ և թե բրդի յերկարությամբ, դա մի իսկական մեծ անտառային գայլ եր։ Միայն գույնը շան գույնի եր նման։ Գայլերն այդ գույնի բուրդ չեն ունենում—մուգդարչնագույն, կարմրագեղին բծերով։ Կողքերին դարչնի գույնը հետզհետե գունատվում եր և փորի վրա փոխվում դեղինի։ Վզի և թաթերի վրա գտնվող սպիտակ բծերը կեղտոտ տեսք եին տալիս, վորովհետև դարչնի գույնն այնուամենայնիվ թափանցում եր նրանց միջով։ Աչքերը վոսկու նման փայլփլում եին։

Տղամարդն ու կինը շանը շատ եին

սիրում։ Նրանք չափ[illegible]անց ուժեղ էին սի-
րում նրան, գուցե այն պատճառով, վոր
նրանց համար շան մտերմությունը ձեռք
բերելը հեշտ չեր։

Գայլը նրանց փոքրիկ լեռնային տնա-
կում հայտնվեց, հայտնի չե թե վորտեղից։
Շունը սոված եր ու տանջված և նրանց
աչքի առջև մի ճագար կերավ։ Հետո սո-
ղաց առվակի մոտ և պառկեց սև հաղարճի
թփի տակ։ Յերբ Ուստ Իրվինը ցած իջավ,
վոր մոտիկից դիտի անկոչ հյուրին, շունը
մռռացրեց։ Նույն ձևով վարվեց շունը,
յերբ Մեջը, մի քանի ժամանակից հետո,
մի մեծ ման կաթ ու հաց բերավ։

Պարզվեց, վոր Գայլը չափազանց անհա-
դորդ շուն է, փայփայանք չի սիրում, չի
թողնում, վոր իրեն ձեռք տան, իսկույն
ժանիքներն է ցույց տալիս և մազերը
փշաքաղում։ Այնուամենայնիվ նա չեր հե-
ռանում, պառկում, քնում եր առվի մոտ
և ուտում այն բոլորը, ինչ վոր բերում էին,
սակայն միայն այն ժամանակ, յերբ մե-
նակ եր մնում։ Յերևի այստեղ մնում եր
սաստիկ հյուծված լինելու պատճառով։ Բայց
մի քանի որից հետո, յերբ ուժ հավաքեց,
նա անհայտացավ։

Սրանով էլ պատմությունը կվերջանար,

յեթե Իրվինը գործով նահանգի հյուսիսային կողմը չգնար։ Յերկաթուղու մի կայարանում, Կալիֆորնիայի և Որեգոնի միջև, նա պատահաբար նայեց վագոնի պատուհանից և տեսավ, վոր իրենց հյուրը վազում է յերկաթգծի մոտով ընկած ճանապարհով, գայլի նման, թուխ, հոգնած, փոշոտ, կեղտոտ, բայց անխոնջ։ Շունը յերկու հարյուր մղոն ճանապարհորդություն եր կատարել։

Մոտիկ կայարանում Իրվինը գնացքից ցած իջավ, քաղաքի ծայրին գտնվող մամվաճառից մի կտոր միս գնեց և թափառականին բռնեց։ Գայլը վերադարձավ ծանրոցի վագոնով։

Այսպիսով Գայլը յերկրորդ անգամ տեղավորվեց լեռնային տնակում։

Այս անգամ շանը մի ամբողջ շաբաթ շղթայեցին։ Տղամարդն ու կինն անընդհատ հոգում եյին նրա մասին և բացատրում իրենց սերը։ Սակայն ոտար ու հեռավոր, վորպես ուրիշ մոլորակի բնակիչ, ամենանուրբ սիրային խոսքերին շունը պատասխանում եր մռռոցով։ Շունը վոչ մի անգամ չեր հաջել։

Նրա մտերմությանն արժանանալը հեշտ խնդիր չեր։ Բայց Իրվինն այդպիսի խնդիրներ վճռելը սիրում եր։ Նա պատվիրեց

մի վզկապ, վրան մետաղե տախտակ, վորի վրա գրված եր՝ «Վերադարձնել Ուոտ Իրվինին, Գլին Ելեն, Սոնոմի կոմսություն, Կալիֆորնիա» և վզնոցն անցկացրեց շան վիզը։

Հետո նա շղթան արձակեց և շունն իսկույն անհայտացավ։ Մի որից հետո Մենդոչինո կոմսությունից հեռագիր յեկավ։ Քսան ժամվա ընթացքում շունը վազել եր հարյուր մղոնից ավելի, միշտ դեպի հյուսիս և իր վազքը կշարունակեր, յեթե չբռնեյին։

Շանը վերադարձրին ապրանքատար գնացքով։ Յերեք որ շղթայված մնաց, իսկ չորրորդ որը, հենց վոր շղթան արձակեցին, իսկույն փախավ։

Այս անգամ Գայլը կարողացավ հասնել մինչև հարավային Որեգոն, բայց այնտեղ ել բռնեցին և վերադարձրին Իրվինին։ Մյուս անգամ դեղին թափառականը կարողացավ կտրել Կալիֆորնիայի կեսի յերկարությունը, վոչ Որեգոնի նահանգը, Վաշինգտոնի նահանգի մեծ մասը։ Նրա արագաշարժությունն ուղղակի զարմանալի յեր։

Հանգստանալով և սնվելով, շունը նոր ուժով ճանապարհ եր ընկնում։ Միշտ դեպի հյուսիս եր փախչում, յենթարկվելով մի ինչ վոր անհասկանալի բնազդի։

Վերջ ի վերջո, մի շարք անհաջող փա-
խուստներից հետո, վոր շարունակվեց մի
ամբողջ տարի, շունը հաշտվեց անխուսա-
փելիության հետ և վորոշեց մնալ այն տնա-
կում, վորի պատուհանների տակ յերբեմն
ճագար եր սպանել և առվի մոտ քնել։

Շատ ժամանակ անցավ, մինչև Գայլը
թողեց, վոր իրեն շոյեն։ Իրվինի և իր կնոջ
համար դա մի խոշոր հաղթանակ եր, վորով-
հետև շունը, բացի իրենցից, վոչ վոքի չեր
թողնում, վոր իրեն ձեռք տան։ Գայլը շատ
խստաբարո յեր և տնակն այցելողներից վոչ
մեկի հետ չմտերմացավ։ Իրեն մոտենալու
ամենափոքր փորձին պատասխանում եր
խուլ մռռոցով։ Իսկ յեթե վորևե համարձակ
մարդ անպատճառ ուզում եր մոտենալ,
Գայլի շրթունքները շարժվում եյին, սար-
սափելի ժանիքները յերևում։ Շունն սկսում
եր մռռացնել։ Շրջակայքում գտնվող բոլոր
ագարակատերերի շները վախենում եյին
Գայլից։ Նրանք սովոր եյին սովորական շան
մռռոցին, և յերբեք գայլի մռռոց չեյին լսել։

Իրվինը վոչ մի կերպ չկարողացավ իմա-
նալ, թե ով է Գայլի առաջվա տերը։ Հա-
րևանուհի որիորդ Զոնսոնը, վորը նրանց
կաթ եր մատակարարում, հավատացնում
եր, վոր շունը Կլոնդայկից է։

Սակայն վոչ վոք նրա կարծիքը չեր ժըխ-տում։ Իսկապես վոր Գայլի ականջների ծայրերը, ինչպես յերևում եր, մի ժամանակ ցուրտը տարել եր, բայց այնքան ուժեղ, վոր մինչև այսոր չեր բժշկվում։ Հենց իր տեսքով ելնման եր Ալյասկայի շներին, վորոնց նկարը պատահում եր լրագրերում և ժուռնալներում։ Ուոտն ու Մեջը հաճախ պատկերացնում եյին շան անցյալ կյանքը հեռու ցուրտ յերկրում։ Նրանք չեյին կասկածում, վոր հյուսիսը դեռևս Գայլին դեպի իրեն եր գրավում։ Յերբեմն, մինչև անգամ գիշերները կամաց լաց եր լինում։ Յերբ փչում եր հյուսիսի քամին և ոդը սառնամանիքոտ եր դառնում, Գայլը չափազանց անհանգստանում եր և սկսում եր բարձրաձայն և վշտալի վոռնալ։ Վոչ մի դեպքում Գայլը չեր հաջում։

Գայլին ընտանի դարձնելով, Իրվինն ու Մեջը շատ եյին վիճում այն մասին, թե իրենցից վորին ե պատկանում և վորին ե ավելի սիրում։ Յուրաքանչյուրն իր իրավունքն եր պաշտպանում, յուրաքանչյուրը հպարտությամբ պատմում եր շան կողմից դեպի իրեն հայտնաբերած քնքշությունը։ Սկզբում առավելությունն Իրվինի կողմն եր, հենց այն պատճառով, վոր նա տղամարդ

եր։ Յերևի Գայլը յերբեք կանանց հետ գործ չեր ունեցել։ Նա կանանց չեր հասկանում։ Մեջի շրջազգեստը նրա համար լրիվ չափով ընդունելի չեր։ Շրջազգեստի յուրաքանչյուր խշշոցից Գայլը կասկածելի կերպով փշաքաղվում եր, և յերբ յեղանակը քամոտ եր, Մեջը շանը մոտենալու մասին յերբեք չեր կարող մտածել։

Գայլին կերակրում եր Մեջը։ Այն ժամերին, յերբ Մեջը խոհանոցումն եր լինում, Գայլը յերկար ժամանակ դռան մոտ կանգնած, սպասում եր իր տանտիրուհուն։ Յեվ աստիճանաբար հաղթահարեց իր ատելությունը դեպի նրա հագուստը։ Այս նկատելով, Ուոտը շանը սովորեցրեց իր վոտների մոտ պառկել, յերբ նա գրում եր, թեև այդ պատճառով նա ստիպված եր լինում հաճախ կտրվել աշխատանքից, վոր փայփայի շանը և խոսի նրա հետ։ Վերջ ի վերջո հաղթանակը Ուոտի կողմը մնաց։

Մի անգամ նրանք զբոսնում եյին արահետում։ Մեկ աճած ձարխոտի միջից մի փոքրիկ առու յեր հոսում։ Առուն ճանապարհը կտրում եր հենց նրանց վոտների մոտից։ Դաշտից լսվում եր արտուտի քընքուշ յերգը։ Զորս կողմում դեղին թիթեռներ եյին թռչկոտում, յերբեմն արեգակի ճա-

ռազայթների մեջ լողալով, յերբեմն ստվերում անհայտանալով։ Հանկարծ ներքևից ապմուկ լսվեց։

Դա ծանր վոտների դոփյուն եր, վորին ժամանակ առ ժամանակ ուղեկցում եր թափվող քարերի աղմուկը։ Վոլորանից մի մարդ դուրս յեկավ։ Նրա գլուխը բաց եր։ Նա սաստիկ քրտնած եր։ Մի ձեռքով նա սրբում եր իր ճակատը, իսկ մյուս ձեռքին կար մի նոր գլխարկ և ոսկյայած ոձիք, յերևի վզից նոր եր հանել։ Մարդը հիանալի կազմվածք ուներ, թվում եր, թե նրա մկանների ճնշումից շուտով նոր կոստյումը կճաքվի։

— Տաք որ է,— ասաց Ուոտը, իբրև բարև։

Մարդը կանգնեց ու գլխով արավ։

— Յես տաքի սովոր չեմ,— կարծես արդարանալով ասաց նա։ — Սառնամանիքն ավելի յեմ սիրում։

— Մեզ մոտ սառնամանիքներ չեն լինում,— ծիծաղեց Ուոտը։

— Յես ել այդպես եմ կարծում, պատասխանեց անցորդը։

— Սառնամանիքի չեմ ել սպասի։ Յես միայն ուզում եմ քրոջս գտնել։ Կարելի յե ձեզ հայտնի յե, թե վորտեղ է նա ապրում։ Նրան կանչում են Զոնսոն, որիորդ Ուելյամ Զոնսոն։

— Դուք նրա յեղբայրը չէք արդյոք, Կլոնդայկից,— բացականչեց Մեջը և նրա աչքերը հետաքրքրությունից վառվեցին։ Նա մեզ այնքան է պատմել ձեր մասին...

— Յես ինքս եմ, վոր կամ,— համեստորեն պատասխանեց անցորդը։— Ինձ կանչում են Սկայֆ Միլլեր։ Յես վորոշել եմ անակնկալ կերպով հայտնվել...

— Դուք միանգամայն ուղիղ եք գնում։ Սա հետևակի արահետ է։— Մեջը ցույց տվեց դեպի ձորը տանող ճանապարհը։— Տեսնում եք այն ծառը, վոր կարկուտը կոտրել է։ Նրա մոտից ճանապարհը ծռվում է դեպի աջ։ Սա ձեր քրոջ տունը տանող ամենակարճ ճանապարհն է։ Մոլորվել չի կարելի։

— Զափազանց շնորհակալ եմ, տիկին,— ասաց նա։

Նա շուռ յեկավ, կարծես ուղենալով շարունակել ճանապարհը, բայց հանկարծ կանգնեց։

— Մեզ համար շատ հետաքրքրական կլիներ լսել Կլոնդայկի մասին,— ասաց Մեջը։ Չի՞ կարելի արդյոք այցելել ձեզ, քանի վոր դուք ձեր քրոջ հյուրը կլինեք։ Կամ, ավելի լավ, չէ՞ք գա արդյոք մեզ մոտ ճաշի։

— Շատ շնորհակալ եմ, տիկին, շփոթված կրկնեց նա։ Հետո գլխի ընկավ և ա-

վելացրեց։ — Միայն թե յես յերկար ժամանակով չեմ յեկել։ Յես պետք ե վերադառնամ հյուսիս։ Յես յերեկոյան գնացքով պետք ե ճանապարհ ընկնեմ։ Յես, գիտեք, տոմսակ...

Մեջն ասաց, վոր դա շատ ցավալի յե, և նա արդեն առաջ շարժվեց։

Բայց հանկարծ դուրս յեկավ մինչև այդ թփերի մեջ վազվզող Գայլը։ Սկայֆ Միլլերի դեմքի արտահայտությունը փոխվեց։ Նա աչքերը չռած նայում եր շանը և նրա վողջ կերպարանքը մեծ զարմանք եր արտահայտում։

Ա՛խ, սատանան տանի, — դանդաղ և հանդիսավոր կերպով ասաց նա։

Նրա ձայնից Գայլի ականջները կախվեցին, իսկ բերանը ժպտուն դարձավ։ Նա դանդաղ վազեց անծանոթի մոտ և, հոտոտելով նրա ձեռքերը, լիզեց։

Սկայֆ Միլլերը շոյեց շան գլուխը և նորից դանդաղ ու հանդիսավոր կերպով կրկնեց։

— Ա՛խ, սատանան տանի։ Ներողություն եմ խնդրում, տիկին, — ասաց նա իսկույն։ — Զափազանց զարմացա... ահա թե ինչ...

— Մենք ել զարմացանք, — ձայն տվեց

Մեջը։—Մենք յերբեք չենք տեսել, վոր Գայլն այդպես հանդիպի ոտար մարդկանց։

— Դուք նրան գայլ եք կանչում,—հարցրեց Սկայֆ Միլլերը։

—Այո՛։ Բայց յես չեմ հասկանում, թե ինչու շունն այդպես սիրալիր է դեպի ձեզ։ Հենց նրա համար, վոր դուք Կլոնդայկից եք։ Գիտեք, Գայլն ել է Կլոնդայկից։

—Այո՛, տիկին,—անուշադրությամբ բերանից թռցրեց նա։ Նա ձեռքն առավ Գայլի առջևի թաթերից մեկը և դիտեց վոտքի տակը, մատները քսելով։—Փափուկ է,—ասաց նա։—Յերևում է յերկար ժամանակ սառուցի վրայով չի վազել։

—Այնուամենայնիվ, ասաց Ուոտը,—միանգամայն անհավատալի յե, թե ինչպես Գայլը թույլ է տալիս իր հետ այդպես վարվել։

Սակայֆ Միլլերը տեղից վեր կացավ։ Քիչ առաջ ունեցած անշնորհքությունից հետք ել չեր մնացել։ Նա կարճ, գործարար ձայնով հարցրեց.

—Վազուց է ձեզ մոտ։

Բայց այդ ըոպեյին, շունը հանկարծ գլուխը բարձրացրեց և հաչեց։ Դա մի ուրախ հաչոց եր, կարճ, անշնորհք, բայց և այնպես հաչոց։—Ա՛յ, սա արդեն ինչ վոր նոր բան է,—նկատեց Սկայֆ Միլլերը։

Ա 232 76
6768 8 22

ՀԱՄՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Ուոտն ու Մեջը նայեցին իրար։ Հրաշքը կատարվեց։ Գայլը հաջեց։

Գայլն առաջին անգամն է հաջում,—ասաց Մեջը։

— Այո, յես էլ յերբեք չեմ լսել,—նկատեց Միլլերը։

Մեջը ժպտաց։ Այդ մարդը յերևի, սիրում եր կատակ անել։

— Դե՛, իհարկե,—ասաց նա։ — Ձե՞ վոր դուք նրան առաջին անգամ տեսաք հինգ րոպե առաջ։

Սկայֆ Միլլերն ուշադրությամբ նայեց նրան։

— Իսկ յես կարծում եյի, թե դուք գլխի ընկաք,—հանդարտ ասաց նա։ — Դուք պետք է գլխի ընկնեյիք, հենց վոր տեսաք թե ինչպես է ինձ հետ վարվում։ Սա իմ շունն է։ Յեվ անունը վոչ թե Գայլ է, այլ Շեկլիկ։

— Ո՞, Ուոտ,—ակամա դիմեց Մեջը մարդուն։

Ուոտն խկուլն հարձակման դիմեց։

— Ի՞նչ գիտեք, վոր սա ձեր շունն է,—հարցրեց նա։

—Վորովհետև հենց այդպես է,—յեղավ պատասխանը։

— Ինչով կհաստատեք,— սուր կերպով առարկեց Ուոտը։

Սկայֆ Միլլերն աչքերը հանդարտ ուղղեց նրա վրա և ասաց.

— Իսկ ինչ գիտեք, վոր սա ձեր կինն է։ Ցերևի կասեք. «հենց այդպես է», իսկ յես ձեզ կպատասխանեմ. «ինչով կհաստատեք»։ Շունն իմն է։ Յես եմ նրան մեծացրել։ Միթե յես չեմ ճանաչի։ Իսկույն դուք ինքներդ կտեսնեք։

— Շեկլիկ,— գոչեց նա։ Այդ ձայնից շան ականջները դեպի գլուխը թեքվեցին, կարծես թե փայփայանքի յեր սպասում։— Գիր։— Շունը կիսաշրջան կատարեց և դեպի աջ ծռվեց։— Այժմ դեպի առաջ։— Շունը հանկարծ կանգնեց, հետո առաջ վազեց և կանգնեց միայն այն ժամանակ, յերբ նա կանչեց։

— Կարող եմ և սուլոցով,— հպարտորեն ասաց Սկայֆ Միլլերը։— Շեկլիկը գնում եր իմ լծասարքի առջևից։

— Բայց դուք շանը չեք տանի ձեզ հետ,— դողդոջուն ձայնով հարցրեց Մեջը։

Միլլերը գլխով արավ։

— Վերադառնում եք այն սարսափելի Կլոնդաֆյկը, վորտեղ բոլորն այնպես տանջվում են։

Միլլերը նորից գլխով արավ և ավելացրեց.

— Այնտեղ այնքան էլ վատ չէ։ Նայեցեք ինձ։ Առողջ տղա յեմ, հաՀ։

— Իսկ շներն այնտեղ ինչ նեղություն են քաշում։ Այնպիսի ծանր պայմաններ։ Հոգնեցուցիչ աշխատանք։ Սով, սառնամանիք... Ցեռ կարդացել եմ, յես գիտեմ։

— Մի անգամ քիչ եր մնում, վոր այդ շանն ուտեմ։ Փոքրիկ Ջկան գետի մոտ եր, — մռայլորեն արտասանեց Միլլերը։ Միայն թե այդ որը մի մուկ բռնեցի և այդ բանը նրան փրկեց։

— Ավելի շուտ յես կմեռնեյի, — բացականչեց Մեջը։

— Այստեղ ուրիշ կյանք է, — ասաց Միլլերը։ — Ինչու պիտի այստեղ շուն ուտեք։ Իսկ այնտեղ, յերբ գործը հասնի այդ կետին, դուք կսկսեք ուրիշ կերպ դատել։

— Բանն էլ հենց այդ է, — ասաց Մեջը ջերմորեն։ — Կալիֆորնիայում շներ չեն ուտում։ Ինչու Գայլին չթողնել այստեղ։ Շունը միշտ բավականին ուտելիք ունի, այդ դուք գիտեք։ Շունն այստեղ ցրտից չի տանջվի և ստիպված չի լինի աշխատել։ Այստեղ ամեն ինչ տաք է և մեղմ, թե մարդիկ և թե բնությունը։ Վոչ վոք Գայլին չի ծեծի։ Իսկ

այստեղի յեղանակը,—մինչև անգամ ձյուն եկ չի գալիս։

—Սակայն ամառն այրում է, ներողություն եմ խնդրում,—ծիծաղեց Սկայֆ Միլլերը։

—Դուք ինձ չեք պատասխանում,—շարունակեց Մեջը։ Դուք ինչ կարող եք տալ շանը հյուսիսում։

—Կերակուր, յերբ յես ունեմ, իսկ մեծ մասամբ ունենում եմ։

—Իսկ մնացած ժամանակ։

—Մնացած ժամանակը—վո՛չ։

—Իսկ աշխատանք։

—Աշխատանք շատ կա,—ասաց Միլլերը։—Աշխատանք առանց հանգստի, և՛ քաղցած կմնա, և՛ կառուչի, և՛ ամեն բան, յեթե Շեկլիկն ինձ հետ գնա։ Միայն թե այդ բոլորը սիրում է։ Ընտելացել է։ Շունն այնտեղ է ծնվելու մեծացել։ Դուք այնտեղ չեք յեղել և մեր կյանքի մասին վոչինչ չգիտեք, իսկ Շեկլիկն այնտեղ իր կյանքից բավական կլինի։

Շունը կմնա այստեղ,—վճռական կերպով հայտնեց Ուոտը։—Մենք վիճելու վոչինչ չունենք։

—Այսինքն, ինչպես թե,—հարցրեց Միլլերն ունքերը կիտելով և կարմրելով։

—Յես ասացի, վոր շունը կմնա այստեղ։

Դա վճռված գործ է։ Ցեռ չեմ հավատում, թե ձեր շունն է։ Դուք, գուցե, նրան տեսել եք յերբևիցե։ Գուցե մինչև անգամ տիրոջից վերցրել եք վորևե ճանապարհորդություն կատարելու համար։ Վոր շունը ձեր կանչերը լսում է, այդ դեռ վոչինչ չի հաստատում։ Դրանք Ալյասկայի սովորական կանչերն են։ Ալյասկայում յուրաքանչյուր շուն կլսի այդ կանչերը։ Ցերևի Գայլը շատ թանգ արժե, այդ պատճառով ել ուզում եք տիրանալ։ Դուք պետք է հաստատեք, վոր նրա տերն եք։

Սառնարյուն կերպով և ինքնազսպությամբ Սկայֆ Միլլերն ուշադրությամբ աչքերով չափեց թուլակազմ բանաստեղծին։ Միայն ճակատն ավելի կնճռոտեց, այտերն ավելի կարմրեցին, իսկ մկանները, սև մահուդե բաճկոնի տակ, ավելի ուռան։

Վերջապես, նրա դեմքի վրա յերևաց արհամարհական արտահայտություն և նա ասաց։

Ճշմարիտ ասեմ, թե այս բոպեյիս ինչն է խանգարում շունը տանելուն։

Ուռոտը կարմրեց և ակամայից բռունցքը սեղմեց։ Սակայն այստեղ մեջ ընկավ Մեջը։

—Կարելի յե պարոն Միլլերը ճիշտ է ասում։—սկսեց նա։—Նա մինչև անգամ

յերևի ճշմարիտ ե ասում։ Գայլը, կարծես, ճանաչում ե նրան և, անկասկած արձագանքում «Շեկլիկ» անվանը։ Շունն իսկույն պարոն Միլլերի մոտ վազեց, իսկ այդպիսի բան, դու գիտես, վոր յերբեք չի պատահել։ Հիշիր, թե ինչպես եր հաջում։ Ուրախությունից իրեն կորցրել եր։ Ինչո՞ւ ուրախացավ։ Յերևի, նրա համար, վոր հանդիպեց պարոն Միլլերին։

Ուոտն անհուսալի կերպով ձեռքը թափահարեց.

— Թերևս դու ճիշտ ես ասում, Մեջ,— ասաց նա։ Գայլը Գայլ չե, այլ «Շեկլիկ» և պատկանում ե պարոն Միլլերին։

— Գուցե պարոն Միլլերը շունը կվաճառի մեզ,— առաջարկեց նա։ Մենք կարող կլինենք գնել։

Սկայֆ Միլլերը գլուխը թափահարեց արդեն վոչ թե մարտական, այլ մեղմ, պատրաստ մեծահոգությանը մեծահոգությամբ պատասխանելու։

— Յես հինգ շուն ունեյի,— ասաց նա։— Շեկլիկը սոված եր։ Ալյասկայում իմ լծասարքն ամենից լավն եր։ Վոչ վոք չեր կարողանում ինձ հասնել։ 1898 թվին հինգ շան համար ինձ հինգ հազար դոլլար առաջարկեցին, բայց յես մերժեցի։ Ճիշտ ե, այն

ժամանակ շները թանդ էին։ Լծասարքն էլ ինձ շատ էր դուր գալիս։ Իսկ Շեկլիկը հնդի մեջ ամենալավն էր։ Վերջին ձմռանը Գայլի համար հազար յերկու հարյուր էին առաջարկում։ Այն ժամանակ կծախեյի, իսկ հիմա չեմ ծախի։ Շեկլիկին չափազանց շատ եմ սիրում։ Յերրորդ տարին է, ինչ վորոնում եմ։ Յերբ լսեցի, վոր գողացել են, քիչ մնաց հիվանդանայի։ Սակայն վոչ թե փողի համար, այլ այն պատճառով, վոր շատ, շատ եմ սիրում։ Յերբ շանն այստեղ տեսա, աչքերիս չհավատացի, կարծեցի թե յերազ եմ տեսնում։ Հասկանում եք. յես նրան մեծացրել եմ։ Ամեն գիշեր պառկեցրել եմ քնելու, փաթաթել եմ։ Մայրը սատկեց, յես նրան՝ տուփը յերկու դոլլարանոց խտացրած կաթով եյի կերակրում։ Ինայում եյի կաթն իմ սուրճի մեջ լցնել, բայց նրան կերակրում եյի։ Յես նրա համար մոր փոխարեն եյի։ Պատահում էր, վոր մատս էր ծծում — ահա այս մատս։

Յեվ Սկայֆ Միլլերը, հուզմունքից իր ճառն ընդհատելով, ցուցամատը բարձրացրեց։

— Ահա այս մատս, — դժվարությամբ արտասանեց նա, կարծես թե հաստատելով սեփականության, և շան իր հետ կապված լի-



նելու իրավունքը՝ նա շարունակում եր նայել իր մատին, յերբ խոսեց Մեջը։

—Իսկ շունը,—ասաց նա։—Մտածեցեք շան մասին։

Սկայֆ Միլլերը զարմացած նայեց նրան։

—Մտածեցեք շան մասին,—կրկնեց նա։

—Չեմ հասկանում, թե ինչ եք ուզում ասել,—պատասխանեց նա։

—Չե՞ վոր շունն ել ընտրելու իրավունք ունի,—շարունակեց Մեջը։—Չե՞ վոր նա յել կարող ե ունենալ իր ճաշակն ու ցանկությունը։ Դուք շան մասին չեք մտածում, չեք թողնում, վոր ընտրություն կատարի։ Իսկ ինչ կանեք, յեթե նրա համար Կալիֆորնիան ավելի լավ լինի, քան Ալյասկան։ Դուք միայն ձեր մասին եք մտածում, իսկ նրա հետ այնպես եք վարվում, վոր կարծես կարտոֆիլի տոպրակ լինի կամ մի խուրձ խոտ...

Սա բոլորովին նոր տեսակետ եր։ Միլլերն սկսեց մտածել։ Մեջն շտապեց ոգտագործել դրությունը։

—Յեթե դուք շանն իսկապես սիրեյիք, ձեզ համար լավ կլիներ այն, ինչ վոր լավ ե նրա համար,—համոզում եր նա։

Սկայֆ Միլլերը դեռ պայքարում եր իր դեմ։ Մեջը ամուսնու վրա հրճվանքի հա-

յացք գցեց։ Մարդը գլխի շարժումով հա-
վանություն տվեց։

— Վերջը,—հարցրեց հանկարծ Միլլերը։

Այս անգամ Մեջը շփոթվեց։

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Դուք կարծում եք, թե շունը կցան-
կանա մնալ Կալիֆորնիայում։

Նա գլխով արավ։

— Համոզված եմ։

Սկայֆ Միլլերն աչքը շնից չհեռացնե-
լով, մտքի մեջ ընկավ։

— Լավ աշխատող եր։ Ինձ համար շատ
լավ եր աշխատում։ Ցեվ խելոք ե։ Ա՜խ, ինչ
խելոք ե։ Ամեն բան հասկանում ե, միայն
խոսել չի կարողանում։ Իսկ հիմա, տես-
նում եք։ Նա հասկանում ե, վոր իր մասին
ենք խոսում։

Շունը պառկած եր Սկայֆ Միլլերի վոտ-
ների մոտ, գունչը թաթերի մեջ առած, ա-
կանջները սրած, աչքերը մի խոսողից մյու-
սի վրա դարձնելով։

Մի յերկու անգամ Սկայֆ Միլլերը
բերանը բաց արավ, կրկին փակեց և վո-
չինչ չասաց։ Վերջապես խոսեց.

— Ահա թե ինչ կասեմ ձեզ։ Դուք, կա-
ըելի յե, ճիշտ ասեցիք, տիկին։ Շունն իս-
կապես իր կյանքում շատ ե աշխատել։ Կա-

բելի յե, ճիշտ վոր, նա ուզում է փափուկ անկողնում քնել։ Թող ինքն ընտրի։ Ինչ վոր վորոշի, թող այնպես էլ լինի։ Դուք յերկուսդ այստեղ նստեցեք, իսկ յես հրաժեշտ կտամ ու կգնամ։ Յեթե կվազի իմ յետևից, թող գա։ Յես նրան չեմ կանչի, դուք էլ չկանչեք։

Նա կասկածանքով նայեց Մեջին և վերջացրեց.

— Միայն թե աղնվորեն վարվենք։ Դուք նրան ինձնից թաքուն չհամոզեք։

— Մենք աղնվորեն կվարվենք,—ասաց Մեջը։—Շնորհակալություն, պարոն Միլլեր։

— Ինչու համար եք շնորհակալություն հայտնում,—առարկեց նա։ Տեսնենք թե ինչ կվորոշե Շեկլիկը։ Դուք նրա վրա մի նեղացեք։ Յես կամաց կգնամ։ Հարյուր քայլ վոր անեմ, էլ չեմ յերևա։

— Իսկ յես խոսք եմ տալիս, վոր նրան չպահեմ,—ասաց Մեջը։

— Այդպես։ Դե, յես գնացի,—հայտնեց Սկայֆ Միլլերը։

Այս լսելով, Գայլն արագ գլուխը բարձրացրեց և ավելի արագ վոտքի յելավ, յերբ տեսավ, վոր Մեջն ու Միլլերն իրար ձեռք են սեղմում։ Նա յետևի վոտների վրա կանգնեց, առջևի վոտներով հենվեց Մեջին և

միաժամանակ լիզեց Սկայֆ Մելլերի ձեռքը։ Նույնը կրկնվեց, յերբ հրաժեշտ եյին տալիս տղամարդիկ։

Սկայֆ Մելլերը շուռ յեկավ և արահետով կամաց գնաց։

Սկզբում շունն աչքերով, ուշադիր և աշխուժացած, ուղեկցում եր նրան, յերևի, նկատի ունենալով, վոր կվերադառնա։ Հետո, խուլ ձայնով վնգստաց և վազեց նրա յետևից։ Հասավ, շրթունքներով ձեռքը բռնեց և համառությամբ և քնքշաբար փորձեց կանգնեցնել նրան։

Յերբ այդ չհաջողվեց, Գայլը յետ սլացավ դեպի այնտեղ, ուր նստած եր Ուոտ Իրվինը և նրա թևը բռնելով, աշխատում եր քաշ տալ գնացողի յետևից։

Գայլի վրդովմունքն ուժեղացավ։ Ուզում եր միաժամանակ յերկու տեղում լինել — հին և նոր տերերի մոտ, իսկ նրանց միջև յեղած տարածությունը քանի գնում մեծանում եր։ Նա վրդովված, տանջող անվճռականությամբ սլանում եր մերթ մեկի, մերթ մյուսի մոտ, չիմանալով, թե ինչ անի և չկարողանալով ընտրել նրանցից մեկն ու մեկին վնգստում, շնչասպառ եր լինում։

Բայց ահա նա նստեց, դունչը ցցեց, բերանը ջղաձգաբար բաց ու խուփ արավ, ա-

մեն անգամ ավելի լայն բանալով։ Ավելի ուժեղ ու հաճախ կրկնվեցին կոկորդի ջղաձգությունները, յերբ վերջապես դողդողացին ձայնակապերը, սկզբում անձայն, այնպես, ինչպես ձայն ե հանում ոգը, ներշնչելիս։ Ապալավեց ցածը, ամենացածը ձայնը, վոր կարող ե ընդունել մարդու ականջը։ Այս բոլորը վառնոցի նախերգանքն եր։

Բայց այնուամենայնիվ Գայլը չվառնաց։ Նրա լայն բացված բերանը հանկարծ փակվեց և նա սկսեց նայել, հեռացող մարդուց աչքը չհեռացնելով։ Հետո գլուխը շրջեց և սկսեց անթարթ նայել Ուոտին։ Կոչն անպատասխան մնաց։ Գայլը չեր լսում վո՛չ խոսք, վո՛չ ցուցմունք, վո՛չ ակնարկ այն մասին, թե ինչ անի։

Արդեն ճամփի շրջադարձին մոտեցող հինտիրոջ վրա աչք գցելով, Գայլը նորից հուզվեց։ Նա վոտքի կանգնեց, բայց այդ ժամանակ նրա մեջ նոր միտք հղացավ և նա դարձավ դեպի Մեջը։ Մինչև այժմ շունը նրա վրա ուշադրություն չեր դարձնում, իսկ այժմ, յերբ յերկու տերերն ել իրեն ոգնելուց հրաժարվեցին, իր ամբողջ հույսը նրա վրա յեր դրել։ Մոտեցավ Մեջին և գլուխը թաղեց նրա ծնկների արանքում, քիթը դիպցնելով նրա ձեռքին։ Շունը հա-

ճախ եր այդ միջոցին դիմում, յերբ ուզում եր վորևե բան խնդրել։ Հետո հեռացավ և սկսեց խաղալ, ցատկելով և կուշ գալով, ականջները գլխին դիպցնելով, պոչը պըտտացնելով — մի խոսքով աշխատելով իր ամբողջ կերպարանքով արտահայտել այն, ինչ վոր իրեն անհանգստացնում եր։

Բայց շուտով սրանից էլ հրաժարվեց։ Նրան տանջում եր այդ մարդկանց սառնությունը, վորոնք առաջ յերբեք դեպի ինքն այսպիսի սառը վերաբերմունք չեյին ունեցել։ Մարդիկ իրեն չեյին պատասխանում, չեյին ուզում ոգնել, ուշադրություն չեյին դարձնում։ Նրանք մեռելի պես եյին։

Շունը շրջվեց և մի առ ժամանակ նայեց հին տիրոջ յետևից։ Սկայթ Միլլերը մոտենում եր ճամփի շրջադարձին։ Մի ակընթարթ էլ և նա կանհայտանա։ Սակայն Միլլերը վոչ մի անգամ յետ չնայեց, քայլում եր հանդարտ և համաչափ, կարծես ինչ վոր կատարվում եր յետևում, նրան ամենևին չեր հետաքրքրում։

Այդպես էլ նա անհայտացավ վոլորանի յետևում։ Գայլը մի բոպե յել սպասեց — կրկին չի՞ յերևա արդյոք։ Նա սպասում եր լուռ, հանդարտ, անշարժ, ինչպես քարե արձան։ Նա մի կարճ հաջոց արձակեց և նո-

ըից սկսեց սպասել։ Հետո վազեց դեպի Ուոտ Իրվինը, հոտոտեց նրա ձեռքը և ընկավ նրա վոտների մոտ, աչքերը վոլորանից չհեռացնելով։

Փոքրիկ առվակը, վոր հոսում եր մամռոտ քարերի միջով, հանկարծ կարծես թե ավելի բարձր խոխոջաց։ Արտուտիկները յերգում եյին և ուրիշ վոչ մի ձայն չեր խանգարում անդորրությունը։ Մեծ, դեղին թիթեռնիկները թռչկոտում եյին անձայն, փայլփլելում արևի տակ, թագնվում ստվերում։ Մեջը մարդու վրա հաղթանակող հայացք գցեց։

Մի քանի վայրկյանից հետո, Գայլը վեր կացավ։ Նրա բոլոր շարժումների մեջ վրճռականություն եր յերևում։ Նա մինչև անգամ տղամարդու և կնոջ վրա չնայեց։ Շունը մի բան վորոշել եր։ Նրանք հասկացան։ Գայլի ուշադրությունը դարձված եր արահետի վրա։ Յեվ հասկացան, վոր նրանց համար փորձարկումն այժմ ե միայն սկսվում։ Գայլը վազեց։ Մեջը շրթունքները յերկարացրեց, պատրաստվելով սովորական սիրալիր շվոցով վերադարձնել նրան։ Բայց չշվացրեց։ Նա ակամա նայեց ամուսնու վրա և նրա աչքերում կարդաց հանդիմանություն։ Մեջը ծանր հառաչեց։

Շունը հետզհետե վազքն արագացրեց։ Վո՛չ մի անգամ յետ չնայեց։ Նրա գայլի պոչը ձգվել եր։ Մի թռիչքով գայլը շրջադարձն անցավ ու անհայտացավ։

ՀԱՅԿ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՖՈՆԴԱՐԱՆ № 2
ԱԿ. ԴԻՄԻՆ

Պատ. խմբագիր՝ [redacted]
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր. Ա—1201, հրատ. 3829
Պատվեր 1314, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Երևան, 11 Կնունյանցի, 4

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003772

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

104.

ЦЕНА
11
023276

Джек Лондон
ВОЛК
ГИЗ. ССРА ЕРЕВАН

Пер. 340